№ 169 Սեպտեմբերի 26 (Հոկտեմբերի 8) 1880 Սեպտեմբերի 26 (Հոկտեմբերի 8) № 169

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատանը մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ադրեսի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք մեր բաժանորդներին որոնք դեռ չեն վճարել, շուտով հասցնել մեզ «Մշակի» այս տարվայ բաժանորդութեան վճարը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Նամակ Իգդիրից Նամակ Շուշուց: Ներքին լուրեր:— Արտաքին տեսութիւն: Հայաստանի սովելոց յանձնաժողովի յայտարարութիւնը: Չեռնոգորիա: Ֆրանսիա: Արտաքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Ուրախութեամբ յայտնում ենք, որ ամսիս 13-ին Սուրմալուի գաւառի նորընտիր գաւառապետ, պ. Նիկողայոս Գօգչայեանցը Իգդիր եկաւ: Նրա առաջ գնացին ժողովրդեան գլխաւորները, և ընդունեցին նրան, ներկայացնելով գաւառիս դրութիւնը: Պարոնի իւրաքանչիւր քայլափոխը կարծես մեզ սուրմալուցիներիս հանգստութիւն և ապահովութիւն էր խոստանում: Զարմանալի է, եթէ ոչ ուրիշների, գոնէ մեզ համար, որ տեսնում ենք առաջին անգամ մի համալսարանական անձն գաւառապետութեան պաշտօնում:

Պ. Գօգչայեանցի ամեն մի կարգադրութիւնը մեծ ազդեցութիւն է գործում ժողովրդի վրայ: Իգդիր այժմ կարծես քաղաքի պատկեր է ստացել. անհետացան փողոցներում հաւաքված ջրերը, որոնք հոտելով զանազան հիւանդութիւններ էին գոյացնում, ազատվեցինք նոյնպէս գիշերային թանձր խաւարից, որի պատճառով մարդը մինչև իր տուն հասնելը, քիչ ասեմ, 20 անգամ երկրպագութիւն էր տալիս գետնին: Այժմ բոլորովին հակառակն ենք տեսնում: Շնորհիւ պ. գաւառապետի ունենք մաքուր և լուսաւոր փողոցներ, թէև այս լուսաւորութիւնը աւելի հասարակաց ճեմելիքումն է զգալի, որտեղ հաւաքվում է տեղիս ընտիր հասարակութիւնը: Միւս գլխաւոր ջանքն եղաւ պ. Գօգչայեանցի հասարակաց շտեմարանների մտքի գործադրութիւնը, այնպէս որ այժմ ամեն գիւղ ընտրել է իր համար 3—4 պատգամաւորներ, որոնք պէտք է հաւաքեն ցորեն և շահեցնեն տարուց տարի: Իւրաքանչիւր գիւղը ունի իր համար առանձին շտեմարան: Վերջացնելով նամակը, ցանկութիւն եմ յայտնում որ պ. Գօգչայեանց չը սառեցնէ իր եռանդը, որովհետև գաւառս շատ կարօտ է նորանոր բարեկարգութիւնների:

Մկրտիչ Զաքարեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

18 սեպտեմբերի

Սպանութիւններ, գողութիւններ դեռ ևս շարունակվում են մեր կողմերում: Նահանգապետի կալանաւորած մարդիկները, ինչպէս լսվում է, բուն աւազակապետները չեն եղել: Ամեն տեղ նկատվում է անկարգութիւն և զեղծումներ: Պատմում են, որ պ. գաւառապետը գնալով ամեն մի գիւղ, իր մօտ է հրաւիրել գիւղական դատաւորին և քէօխվին, ու նրանցից թուղթ առել, որով պարտաւորվում է ամեն մի գիւղ տարեկան 100 ր. տալ նոր բացվող ուսումնարանի պաշտպանութեան համար: Լսում ենք, որ գիւղացիք յետոյ հասկանալով իրենց ստորագրած թղթի նշանակութիւնը, նորից խնդիրք են պատրաստում ուղարկելու նահանգապետին, յայտնելով, որ նրանք չեն կարող մի և նոյն ժամանակ երկու ուսումնարաններ պահել, մէկը աշխարհական, իսկ միւսը հոգևոր իշխանութեան ներքոյ:

Չը նայելով, որ այստեղի օրիորդական դպրոցը շատ աննախանձելի դրութեան մէջ է գտնվում, թէ բարոյապէս և թէ նիւթապէս, սակայն նրա մէջ գրաւիչ հանդէսներ և աչքի զարնվող ցոյցեր շատ են պատահում: Անցեալ ամսում այդ դպրոցի մէջ գործեալ մի փառաւոր հանդէս կար, օրիորդաց պարգևաբաշխութեան և մրցանակագիր շնորհելու համար: Հրաւիրված էին օրիորդների ծնողները, հոգաբարձուները և անդամները: Ուսումնարանի բակում ածում էր երաժշտութիւն: Քաղաքային երեսփոխանը կարդում էր ուսումնարանի բարոյական և նիւթական առաջադիմութեան հաշիւը: Անդամները սուրճ էին անուշ անում, իսկ օրիորդները ուրախանալով ստանում էին իրանց վկայականները և իրենց ընկերներին ու ուսումնարանին մնաս բարեաւ էին ասում: Մայրերը շնորհաւորում էին միմեանց, իրենց ուսումնաւարտ և բաղդաւոր աղջիկների կրթութեան մասին և մի առանձին ախորժակով վայելում էին փառաւոր սեղանը: Վարժապետները և վարժուհիները օրիորդների օրհնելով, ճանապարհ էին գնում... Չը գիտեմ. ինչ ուսում, ինչ կրթութիւն կարող է ստանալ 8—10 տարեկան երեխան, որին օտար են իր դաստիարակի լեզուն, խօսքերը, մաներները: Մենք բոլորովին չենք զարմանում, երբ մի շուշեցի տգէտ վաճառական իր փառքի համար աշխատում է պահպանել մի դպրոց, որ պատրաստում է միայն ապուշներ, բայց զարմանում ենք, երբ ասում ենք, որ այդ դպրոցի ղեկավարներից մի քանիսը զարգացած և ինքնաճանաչութեան հասած մարդիկներ են:

Սպանութիւններ մեր քաղաքում լինում են ոչ թէ գիշերներով, այլ համարեա ցերեկով և մեծ փողոցների վրայ: Անցեալ շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին մի պլաստունի գլուխը կտրած գտնում են փոստատնից քիչ հեռու: Մի և նոյն շաբաթը հրապարակի մօտ, մեծ փողոցում, ցերեկով ժամը 11-ին թուրքերի մէջ մի մեծ կռիւ կար, որոնք կռւում էին հրացաններով և թրերով: Անցեալ երեկոյ, մի եասաւուլ մեծ աղմուկ էր բարձրացրել աղ տանող սալդատների հետ, աղմուկը տևեց մօտ երկու ժամ, յետոյ իմացանք, որ եասաւուլը փող էր պահանջում, իսկ սալդատները չէին կամենում նրան փող ընծայել, նա սկսել էր զանազան պատճառներով տանջել խեղճերին: Լսում ենք, որ այդ օրինակ անկարգութիւններ խիստ յաճախ են պատահում:

Արցախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մեղուի» մէջ տպվեցաւ մի շատ կեղտոտ բաց նամակ «Մշակի» խմբագրի դէմ: Լրագիրը, չը գիտենք ինչ իրաւունքով, յանդգնում է պահանջել որ մենք յայտնենք մեր թղթակիցների ազգանունները: Նոյնը և մենք, և աւելի մեծ իրաւունքով, կարող էինք պահանջել պ. Սիմէօնեանից, որ «Մեղուի» ոչ մի համար չէ թողնում առանց մեզ հայհոյելու այլ և այլ կեղծեալ անուններով ստորագրված յօդուածներով և թղթակցութիւններով: Մեզանում կրօնական խնդրի վրա գրողներից գոնէ երեք չորս մարդ պարզ իրանց ազգանուններ են ստորագրում՝ Փիրղալեմեան, Բէպուրեան, Ամիրխանեան և այլն, իսկ «Մեղուի» հայհոյողներ, բոլորն էլ ծածկվում են Սար-Սէր, Թովմաս, Քաղքցի, Գ. Ե. և այլն կեղծ անունների տակ: Մենք էլ պահանջում ենք, որ Սիմէօնեանց յայտնի մեզ իր աշխատակիցների իսկական անունները, եթէ ոչ մենք էլ իրաւունք ունենք կասկածել որ նրա լրագրի մէջ տպված թղթակցութիւնները խմբագրատան մէջ են հնարված: Իսկ իր անունով ստորագրված բաց նամակի վերաբերութեամբ մենք ինչ կանենք,— այդ մեր գործն է:

Սեպտեմբերի 24-ից սկսած վրաց թատրօնական մշտական խումբը սկսեց իր թատրօնական ներկայացումները Ա. Ծերեթելու առաջնորդութեամբ Արծրունու թատրօնում:

Շնորհակալութեամբ ստացանք «Ձայնագրեալ մանկական երգարան» խմբագրեց Եզնիկ քահանայ Երզնկեանց: Գրքոյկը տպված է Վաղարշապատում: Ծախվում է 40 կոպէկով: Մեր կարծիքով աւելի լաւ կը լինէր հրատարակել այդ երգարանը եւրոպական նոտաներով և ոչ թէ ասիական երաժշտական նշաններով:

Շնորհակալութեամբ ստացանք Ռոստով (Դոնի վրա) քաղաքում պ. Յ. Տէր-Աբրահամեանցի ձեռքով հրատարակված «Օրացոյց» 1881 թւի համար: Գրքոյկը մաքուր տիպ ունի և գեղեցիկ դիրքով է հրատարակված և արժէ 15 կոպէկ:

Այս օրերս հրատարակվեցաւ ՄՕՍԿՎԱՑՈՒՄ դոկտոր Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը «Թիւրքաց հայերի տնտեսական դրութեան մասին» ռուսերէն լեզուով: Թարգմանողը պ. Ա. Սաքելեանն է: Բրօշիւրի դիրքը և տիպը շատ գեղեցիկ են: Բրօշիւրը կրում է հետևեալ վերնագիրը «Экономическое Положеніе Турецкихъ Армянъ» Ծախվում է 25 կոպէկով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ ԽՆԱՄՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անցեալ 1879 տարւոյ մայիս և յունիս ամսոյ միջի երաշտութեան համար, թէպէտ արդէն հունձք գրեթէ բնաւին չը կային, սակայն ջրարբին անոնց պակասութիւն ցնելու չափ գրեթէ բերք ունեցաւ: Ուստի անցեալ տարւոյ հունձք ոչ առատ էին և ոչ կարի նուազ, այնպէս որ երկրին համարեա թէ կարէր բաւել եթէ լաւ տնտեսութիւն լինէր, և հին ամբարները կուսակալութենէ դուրս չը հանուէր, թափառական Քրդաց տրուելով:

Անցեալ տարի հունձքերը սակաւ չէին լինէր, եթէ ջրադարձներ, ջրոյ ամբարները ըստ երկրին պիտոյից շինուած և մաքրուած լինէին, որոնք անշուշտ օդուց երաշտութեան դէմ պիտի առնէին, յունիս և մայիս ամսոյ մէջ բաւականին ջուր մատակարարելով թարմ բուսականաց: Իսկ գալով ցնցման պատճառներուն արդէն անցեալ տարի իւր նախորդէն վնասուած էր, զի Պայազիտի պատերազմին պատճառաւ, որչափ մերձաւոր գաւառներ կային՝ Իսմայիլ փաշայի բանակին անհրաժեշտ պիտոյից համար դատարկացան, իսկ հեռաւոր գաւառներ ինչպէս Մուշ, Բաղեշ, Վան, Աղբակ, Ճիւլամերկ և այլն. և այլն. ի Քրդաց ....

Գիւղացին ինչպէս որ նշանակուեցաւ, կորանցունելով իւր սնունդ և սերմանելիք սերմն՝ իւր անցեալ տարուան վարած սակաւ հերկն դատարկ թողուց և հետևապէս ամեն տեսակ ցանք պակաս եղան, որով սոյն աշխարհաւեր սովի տեղի ունեցաւ:

Ցանուածները միջասահման վիճակի մէջ կը գտնուէին, թէպէտ ժամանակին ցանուածներն առատօրէն կը խոստանան տալու: Իսկ (հավար) տարեկան բուսած սերմնին որ անցեալ տարուան գարնանային երաշտութեան համար չը բուսաւ, և գրեթէ շատ գիւղ բուսածներն ալ արդիւնք մը պիտի չունենան: (Այս սերմնին գիւղացի երկրագործի սովորական սնունդն է, և անձրևոտ տարին շատ արդիւնաւոր է և առատութեան պատճառ, թէև քաղաքացին չուտեր ասէ իւր ստամոքսին անյարմար լինելուն համար՝ զի դժուարամարս է:)

Ներկայ տարւոյս գարնան ցանք խիստ քիչ եղաւ, վասն զի աւարառու Քիւրդն արդէն ուտելիք և սերմն սպառած էր. կառավարութիւն գարնան սկիզբէն միայն ուտեստի հոգ տարաւ ցորեան վաճառելով. հարիւրին մինը հերկուած հողին, տասներորդ մասն հացաւորց հետ ընկերութեամբ ցանուեցաւ, զի երկրագործն չունէր ինչ ցանելու:

Ցանուեցան գարի, շատ սակաւ ցորեան, ոսպ, ոլոռն, բակլայ, կանեփրա, կտաւատ և կորեակ:

Առաջի ցանուածներու վիճակ խիստ լաւ էն, իսկ կորեակ որ Երզնկայէն ուշ հասաւ, դեռ յայտնի չէ թէ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ, զի աշնան ցուրտէն կը վախցուի թէ չը հասունայ:

Անցեալ տարի անասնոց վիճակ լաւ էր, զի ձմեռն չափաւոր եղաւ, յարդ և խոտ ըստ բաւականին կար, կտաւատ շատ լինելուն կուսպ ալ շատ կար, որ է միմիայն պարարտութեան դիւրին միջոց այս երկիրներու նկատմամբ, զի ուրիշ սննդարար կերակուր չունին տաւարեղանց տալու:

Ութսուն առ հարիւր նուազած է այս տարի և փճացած, մանաւանդ Աղբակու և շրջակայից մէջ, մաս մը յափշտակուելով, մաս մի ևս ձմերնային երկարութենէ և դարմանաց պակասութենէ. զի փոխանակ խոտի և յարդի, ծառի ճիւղեր, փայտի մանրուկ սեղբ արմատ և դաշտի արմատ կ'ուտէին թէ որ բերաննին հանէր:

Գարուն բացուելուն պէս մնացեալ կենդանիք կմախք դարձած էին չոր ու ցամաք, այնպէս որ տեսնողը կը սոսկար:

Ներկայիս հունձքեր ընդհանրապէս միջասահման են, միայն տափարակ և ոռոգահող արտերը փոքր ինչ վնասեցան ձմերային երկարութենէ: Ըստ մեծի մասին արդասաւոր, մէկին ութն կարող է, զի գարնան անձրևները կանոնաւոր տեղացին, մայիս և յունիս ամիսներ անձրևային անցան: Բուսոց արմատներ լաւ հաստատութիւն առին, ասկէց ետև այժմ ցողունին և հասկի պիտի տայ, և որովհետև տարւոյս ջուրն ալ խիստ առատ է, մէն մի ծեր երկրագործ կարէ ըստ ժամանակին ջրել և դարմանել: Մինչև յունիսի միջև ժանգահար լինելու և կամ մարախի երկիւղ կար, գոհութիւն Աստուծոյ այն ալ անցաւ: Մնաց աւազակութիւնք և եթէ կառավարութիւնն զանոնք զսպէ, իւր դատարկ ամբարներ շուտով պիտի լեցուին և սովն ու տագնապը քիչ շատ կը մեղմանայ:

Վան քաղաքի և շրջակայների եղած հնձոյ բազմնաւորութիւն եթէ իրեն չը բաւէ այնչափ զգալի կերպով ալ չը պակսիր: Բայց Աղբակու կողման հարիւրէն աւելի գիւղեր վարուցանք և գլխաւորապէս ապահովութիւն չունենալու համար, կը պակասի անոնց ամեն պարէնն

Եթէ նոյն պակասորդն Պարսկաստանի Որմիոյ և Դաւրիժոյ կողմանէ չը հոգացուին և Վանայ կողմն արմտիք քիչեալ կողմ գնայ, չբաւեր թէ այս և թէ այն կողմին մէկոնց, որով շարունակութիւն մը պիտի, լինի սովոյ և աւելի եւս սաստիկ մինչև յաջորդ տարւոյ հունձքեր:

Վանայ և շրջակայից համար արմտիք կարէ ստացուիլ, նախ Պարսկաստանէն՝ որոյ վաճառականութիւն Վանայ հետ միշտ շարունակութեան մէջ է. Սղերդէն, Բաղեշէն Ալաշկերտէն, Երևանէն, Մուշէն և Ճիղէբայէն, ամենքեան գովեալ: Առատութեան մէկ գլխաւոր միջոցն ալ շոգենաւն է, որ եթէ երկու հատ փոքրիկ նաւ Վանայ լճակին վերայ շարունակ երթևեկեն, շատ մեծ դիւրութիւն պիտի տան փոխադրութեան, զի մանաւանդ այս միջոցիս փորձն հաստատուեցաւ, երբ ցորենաբարձ նաւերը չորս աւուր չափ հողմոց անյաջողութեան համար ուշանային, իսկոյն ցորենի գինը տասին երեքը չորսը վեր կը բարձրանար, երբ հասնէին իսկոյն կիջնար:

Չը գիտեմք թէ այն բարեմիտ ընկերութիւն որ Վանայ ծովուն վրայ շոգենաւ պիտի կառուցանէ, ո՞ւր մնաց:

Անասունք արդէն ո՞րը գողերէն, ո՞րը սովէն ջարդուած լինելով, չեն բաւեր, մանաւանդ Աղբակու կողմեր, որ համարեա թէ բնաւին չը կայ, զի եղածն ալ կողոպտելով բան չէ մնացած. թէ քանի հատ ալ կար, այն ալ այս միջոցներ փախցնելով ուրիշ կողմեր տարին որ բռնաւորների ճիրաններէն ազատեն: Ապա ի՞նչպէս հերկենք, ի՞նչպէս տեղափոխենք:

Հողագործ մշակն տասն է, հողագործ անասուն հինգ ալ չէ: Նաև չը բաւեր երկրին այս տեսակ հողագործութիւն, զի հողն կարի ընդարձակ է: Թէ կարելի է Եւրոպիոյ գործիներ 'ի Հայաստան բերուին, թէ վարելու, թէ հնձելու և թէ ծեծելու գործիներ, որոնք ժամանակի հետ չը հասնելուն աշունը վրա կուգայ, շատ արմտիք կը մնաուն և շատերն ալ ձիւներու ներքև մնալով կը փտանին: Մանաւանդ լեռնային կողմեր, որ Վանայ հարաւային կողմն բռնած է: Թէև այս տարի շնորհիւ Սովելոյ Յանձնաժողովոյն շատ մը կորեակ ցանինք, բայց տարակոյս կայ թէ աշուն պիտի կարողանայ ժողովել: Զի երկու պատահար կայ, մէկն աշնան շուտ կանխել, և մէկ ալ՝ լեռան Քիւրտերու աւերմը:

ՉԵՐՆՈԳՈՐԻԱ

—

Ցետինիէից «Polit. Corres.» լրագրին գրում են սեպտեմբերի 11-ից հետևեալը:

Սեպտեմբերի 9-ին հասաւ այստեղ Ֆրանսիայի նոր հաւատարմատարը, որ միւս օրը իր հաւատարմաթղթերը իշխանին յանձնելով, ասաց հետևեալը. «Պատիւ ունիմ յանձնել ձեզ Ֆրանսիական Հանրապետութեան նախագահի հաւատարմաթղթերը, որ ինձ ձեզ մօտ ֆրանսիական գործերի հաւատարմատար նշանակեց: Իմ նախորդը պատմել է ինձ այն սիրոյ մասին, որ գտել է նա ձեր մէջ: Խնդրում եմ, իշխան, ինձ էլ անել նոյն օգնութիւնը ինձ յանձնած գործերի կատարելը թեթևացնելու համար: Բեռլինի դաշնադրից յետոյ Եւրոպան ճանաչեց Չերնոգորիայի անկախութիւնը: Այդ անկախութիւնը թանգ է Ֆրանսիայի համար և չերնոգորիական քաջ ժողովուրդը կառավարող թագաւորին յայտնի է այդ հանգամանքը դեռ իր երիտասարդութեան օրերից: Ձեր բարձրութիւնը կարող է միշտ յուսալ իմ կառավարութեան համակրութեան վրա: Ֆրանսիական Հանրապետութեան նախագահը յանձնեց ինձ յայտնել ձեզ այդ իրողութիւնը»:

Չերնոգորիական իշխանը այդ ճառին պատասխանեց հետևեալը. «Ես ուրախութեամբ ստացայ այս հաւատարմաթղթերը, որոնցով Ֆրանսիական Հանրապետութեան նախագահը ձեզ ինձ մօտ ֆրանսիական գործերի հաւատարմատար է նշանակում: Ես ուրախութեամբ լսում էի ձեր նախորդի յայտնած կարծիքները մեր ընդհանուր յարաբերութիւնների մասին և դուք կարող էք համոզված լինել, որ ես և իմ կառավարութիւնը բոլոր ջանքերը գործ կը դնենք ձեր յանձնարարութեան կատարելը հեշտացնելու համար: Ես և իմ կառավարութիւնը կաշխատենք ձեռք բերել Ֆրանսիայի պաշտպանութիւնը և համակրութիւնը, որ Ֆրանսիան երբէք չէ խնայել իմ երկրին և որի նշանակութիւնը ես երեխայութիւնից սովորել եմ գնահատել: Այն հաւաստիքները, որոնց Ֆրանսիական Հանրապետութեան նախագահը յանձնել է ձեզ յայտնել ինձ, ես չափազանց գնահատում եմ, որովհետև նրանք գրաւական են այն հանգամանքի, որ ապագայում ես կարող եմ յուսալ Հանրապետութեան կառավարութեան օգնութեան վրա»:

ՖՐԱՆՍԻԱ

—

Հեռագիրը հաղորդում է հետևեալ շրջաբերականը, որով ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Բարտելեմի Սենտ-Իլեր դիմեց Ֆրանսիայի ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ:

«Հանրապետութեան նախագահի հաւանութեամբ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի պաշտօնը ստանալով, իմ պարտաւորութիւն եմ համարում խնդրել ձեզ, որ դուք հաւատացնէք այն կառավարութեանը, որի մօտ նշանակված էք, որ նոր մինիստրութիւնը ոչինչով չի փոխում նախորդ մինիստրութեան արտաքին քաղաքականութիւնը: Ֆրանսիան այժմեան չափ երբէք չէ գնահատել խաղաղութեան պահպանելը, որ անչափ ձեռնտու է իր զարգացման և պատուի համար:

«Իմ երկարամեայ բարեկամ հանգուցեալ Թիերի իմաստութեամբ հաստատված այդ ձևը պահպանվեցաւ տաս տարիների ընթացքում և գեղեցիկ պտուղներ տուեց: Մենք հաւատարիմ կը մնանք այդ բաղդաւոր աւանդութեանը և ամեն բան կանենք ֆրանսիական Հանրապետութեան և միւս կառավարութիւնների մէջ եղած լաւ յարաբերութիւնները զարգացնելու համար: Այդ նպատակին հասնելու համար ես բոլոր ուժերս գործ կը դնեմ և յոյս ունեմ, որ մեր դիպլոմատիայի բոլոր ներկայացուցիչները կօգնեն ինձ»:

Այս շրջաբերականի առիթով լրագիրները հետևեալ դատողութիւններ են անում:

Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը շտապեց արդարացնել այն ենթադրութիւնները, որ նա այդ պաշտօնը ստացաւ Գերմանիային հանգստացնելու համար: Թիերի ժամանակակիցը և բարեկամը յայտնում է, որ Ֆրանսիան այժմ խաղաղութեանը և իր լաւ յարաբերութիւններին օտար կառավարութիւնների հետ մեծ նշանակութիւն է տալիս:

Այդ շրջաբերականը կը հասնի իր նպատակին և կը հանգստացնի Գերմանիային: Պ. Ֆրէյսինէ բացարձակ յայտնեց, որ ինքը չէ հաւանում Շերբուրի մէջ ասած Գամբետտայի ճառը, որ Բեռլինի մէջ Գերմանիայի համար թշնամական համարեցին: Բարտելեմի Սենտ-Իլեր խոստանում է բոլորովին չը փոխել Ֆրէյսինէի արտաքին քաղաքականութիւնը, ուրեմն նա ցաւալի է համարում ոչ թէ միայն Գամբետտայի արտասանած ճառը, այլ և այն ոգևորութիւնը, որով նրան ծափահարում էին լսողները:

Բայց Գերմանիան ամբողջ Եւրոպա չէ և հետաքրքիր է իմանալ, թէ Բարտելեմի Սենտ-Իլեր, չը փոփոխելով Ֆրէյսինէի արտաքին քաղաքականութիւնը, ի՞նչպէս կը պահպանի Ֆրանսիայի լաւ յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ, քանի որ Ֆրէյսինէի քաղաքականութիւնը միշտ խանգարում էր այդ պետութիւնների արևելեան քաղաքականութեանը: Եթէ ֆրանսիական նոր մինիստրը աչքի առաջ կառնի նոյն պատճառները, որոնք ուշացրին ֆրանսիական նաւատորմի Ռագուզա ուղարկելը և տարածեցին այն լուրը, թէ ֆրանսիական ծովապետին հրամայված է բաժանվել նաւատորմից, հէնց որ նա կրակ կը բացանի ալբանցիների դէմ, նա դժուարութեամբ կը կարողանայ լաւ յարաբերութիւններ պահպանել անգլիական կառավարութեան հետ, որ մտադիր է ծովային ցոյցին գործնական բնաւորութիւն տալ:

Շուտով կը յայտնվի այն ընթացքը, որ բռնել է արտաքին գործերի նոր մինիստրը: Ծովապետ Սէյմուր, պայմանաւորվելով չերնոգորիական իշխանի հետ նրա զօրքերի և միացեալ նաւատորմի ընդհանուր գործողութիւնների մասին, Ցետինիէից վերադարձաւ Ռագուզա: Ծովապետին ուղեկցում է չերնոգորիական զինուորական հաւատարմատարը: Բանակցութիւնները Ռիզա-փաշայի հետ ընդհատված են և թշնամական գործողութիւնների սկսիլը անհրաժեշտ է համարվում: Այսպիսով Ֆրանսիան պէտք է անյապաղ ապացուցանէ, թէ ինքը ճշմարիտ ցանկանում է բարեկամ մնալ թէ անգլիական և թէ սրա հայացքները բաժանող միւս կառավարութիւնների հետ, որոնք անհրաժեշտ են համարում Բ. Դրան դէմ ստիպողական միջոցներ գործադրել:

Բարտելեմի Սենտ-Իլերի մասին լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները: Նա ծնվեցաւ 1805 թ. օգոստոսի 19-ին և իր գործունէութիւնը լրագրական ասպարիզի վրա սկսեց: 1830 թուականին Սենտ-Իլեր Թիերի հետ բողոքեց մամուլի իրաւունքները սահմանափակող օրէնքների դէմ: 1838 թ. «Collège de France»-ի յունական և հռոմէական փիլիսոփայութեան պրոֆեսոր նշանակվեցաւ, իսկ 1839 թ. ֆրանսիական ակադեմիայի քաղաքական բարոյականութեան գիտութիւնների մասնագէտ անդամ ընտրվեցաւ: Նա 1840 թուին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գլխաւոր քարտուղար էր, իսկ 1848 թ. ազգային ժողովի անդամ: 1851 թուականին, երբ Նապոլէոն III-ը պետական հարուած արաւ, Բարտելեմի Սենտ-Իլեր կալանաւորվեցաւ Մազասի բանտի մէջ, իսկ 1852 թուին թողեց պրոֆեսորութիւնը, որովհետև հրաժարվեցաւ Նապոլէոն III-ին հաւատարմութեան երդում տալուց: 1871-1873 թուականը Սենտ Իլեր Թիերի մասնաւոր քարտուղարի պաշտօն էր վարում, իսկ Թիերի անկումից յետոյ չէր մասնակցում հրապարակական գործունէութեանը: Նշանաւոր է այն հանգամանքը, որ Թիերին օրերումս արձան կանգնեցնելը քանի որ աննշմարելի կերպով անցաւ, «Ֆրանսիայի ազատողի» մօտ բարեկամին յանձնվում է երկրի արտաքին քաղաքականութեան կառավարութիւնը և նոր մինիստրութեանը խաղաղասէր բնաւորութեան տալը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Մասիս» հաղորդում է որ և Տրանսիլվանիայի հայերը նպաստներն են հաւաքում յօգուտ Վանի սովեալներին: Ընդամենը հաւաքված է 336 ֆիորին:

—Նոյն լրագրի մէջ կարդում ենք՝ «Հայաստանի, Քրդաստանի և Արևմտեան Պարսկաստանի սովելոց օգնութեան համար Անգլիոյ մէջ նոր միթինկ մը տեղի ունեցաւ: Մինչև ցարդ հանգանակութեան կենդրոնը Լօնդրա եղած էր, բայց գաւառացւոց ալ գթութիւնը շարժելու նպատակաւ, այս անգամ գաւառական քաղաքի մը մէջ, այն է Լօնտրայէն 32 մղոն հեռի գտնված Վէլս հարուստ քաղաքին քաղաքապետական պաշտօնատան մէջ միթինկ մը եղած է օգոստ. 26-ին և 'ի մէջ այլոց անգլիական մասնախմբին հայ անդամ Պ. Կ. Յակոբեան բանախօսութիւն մ'ըրած է:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի: Չերնոգորիան խնդրում է, որ միացեալ նաւատորմը անյապաղ օգնի նրան, պատճառ բերելով սպասելու անկարելութիւնը, որովհետև չերնոգորիական զօրքերը տանջվում են վատ եղանակից: Կարծում են, որ Սէյմուր խորհուրդ կը տայ չերնոգորցիներին անյապաղ յարձակվել:

ՕԴԷՍՍԱ, 22 սեպտեմբերի: Այստեղ հասան կամաւոր նաւ «Եարօսլավլ» Մարսելից և «Նիժնի-Նովգորոդ» Սախալինից:

ԽԱՐԿՈՎ, 22 սեպտեմբերի: Այսօր զինուորական դատարանում քննվում էր տասն և չորս մեղադրվածների գործը, որոնք մեղադրվում են քաղաքական յանցանքների մէջ: Մեղադրվածների թւումն են Խարկովի համալսարանի դոցենտ Սիցինսկօ և նրա գիմնազիստ որդին:

ԲԵՌԼԻՆ, 24 սեպտեմբերի: Գերմանական բանկ ցածացրեց վէկսելների վրա դիսկոնտ 5%-ով, իսկ փոխառութեամբ տոկոսաբեր թղթերի վրա 6%:

ՓԱՐԻԶ, 24 սեպտեմբերի: Բ. Դրան պատասխանը ընդունելի չէ համարվում: Բոլոր պետութիւնները ցանկանում են պահպանել եւրոպական համաձայնութիւնը: Սպասում են Անգլիայի առաջարկութեան:

ԼՕՆԴՕՆ, 24 սեպտեմբերի: «Times» և «Daily News» լրագիրները համարում են Բ. Դրան պատասխանը վիրաւորիչ ամբողջ Եւրոպայի պատուին:

Կ. ՊՕԼԻՍ, 24 սեպտեմբերի: Բ. Դուռը իր պատասխանի մէջ, որ հաղորդած է դեսպաններին, խոստանում է համոզել ալբանցիներին զիջել Դուլցինիօ, պարտաւորվում է վճռել յունաց հարցը երեք ամսվայ մէջ և հայոց հարցը չորս ամսվայ մէջ:

ԴՐԱՎՕԶԱ, 23 սեպտեմբերի: Գերմանական նաւը և երկու իտալական զրահաւոր նաւերը այսօր ճանապարհ ընկան դէպի Թեօդօ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ սեպտեմբերի 1-ից ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ բացվեցաւ մի հայոց ՄԽԱԿԱՆ ԴՊՐՈՑ: Հրաւիրում ենք սորա վրա Հաւլաբարցիների ուշադրութիւնը: Աշակերտներ ընդունվում են ամեն օր մինչև տարւոյ վերջը: Իսկ յետոյ կ'որոշուի ընդունելութեան ժամանակամիջոցը: Թոշակի մասին կարելի է տեղեկանալ ուսումնարանում, որ գտնվում է «Մարիամեան դպրոցի մօտ, Вахтангская улица,» № 32.

5—10

Дозволено цензурою Тифлисъ, 25 Сентября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանների Типографія братьевъ Давидовыхъ